ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մայիսի 2023 թվական թիվ 105-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի ԹԻՎ 68-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասով.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2023 թվականի մարտի 29-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ներքին միավորները հաստատելու մասին» թիվ 68-Ա որոշումը շարադրել նոր խմբագրմամբ՝

1) դադարեցնել տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի գործունեությունը.
2) դադարեցնել գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության բնապահպանության բաժնի գործունեությունը.
3) դադարեցնել ֆինանսական վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գործունեությունը:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից և տարածվում է 2023 թվականի մարտի 29-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Հ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

16.05.2023

X

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

2023թ մայիսի 16
Ք.Իջևան